ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ N8 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ

НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ЕРЕВАНСКОЕ ГОСУДАРСТВЕННОЕ
РЕМЕСЛЕННОЕ УЧИЛИЩЕ N8

ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

REPUBLIC OF ARMENIA

---

**0087, ՀՀ, քաղաք Երևան, Էրեբունի զանգված, Վ.Ավանեսովի** փողոց N1, Հեռ./Тел./ Tel 47-17-32, ֆաքս/факс/fax (374 10) 47-17-31,
0087, РА, г. Ереван, Эребуни массив, ул. В. Аванесова 1, 0087, RA, Yerevan, **Erebuni district, V. Avanesov Str. 1, E-mail** usumnaran8@yandex.com

*01 -75* *« 02 » 08 2024*

*ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,*

*ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ*

*ՏԻԿԻՆ Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ*

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՏԻԿԻՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ*

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ. թիվ 48-Ն հրամանի տեղեկացնում եմ որ, ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի հ8 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում առկա է թափուր աշխատատեղ, որի համար ուսումնարանը հայտարարում է մրցույթ՝

1. «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ և մասնագիտական մոդուլների դասախոս,

2. «Խոհարարական գործ» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ և մասնագիտական մոդուլների դասախոս,

3. Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ և մասնագիտական մոդուլների դասախոս, սահմանված պահանջներն են.

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում:

4. «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաների դասախոս, սահմանված պահանջներն են.

Ուսումնական հաստատության դասախոս կարող է լինել այն անձը ,որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում /բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով/ կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տաս տարվա ընթացքում մանկավարժական /կամ ուսուցչական/ գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

*ՏՆՕՐԵՆ* *Մ.ՀԱԿՈԲՅԱՆ*